ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
(ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

МИНИСТЕРСТВО НАУКИ И ОБРАЗОВАНИЯ РА
ГОСУДАРСТВЕННЫЙ ИНЖЕНЕРНЫЙ
УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ
(ПОЛИТЕХНИК)

MINISTRY OF EDUCATION AND SCIENCE RA
STATE ENGINEERING UNIVERSITY OF ARMENIA
(POLYTECHNIC)

№ 03/071/1583-13 «24» 07 2013 թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
իրավաբան պարոն Գևորգ Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան ՀՊՃՀ ռեկտորին հասցեագրված Ձեր ս/թ.-ի հուլիսի 19-ի հմ. 203-ի 3 գրությամբ բարձրացված հարցադրումների՝ Ձեզ ենք տրամադրում հետևյալ տեղեկատվությունը.

1. Համապատասխան մասնագիտության տվյալ կիսամյակի ուսումնական պլանով նախատեսված առարկաների ստուգարքները կամ քննությունները սահմանված օրը չհանձնած ուսանողն ունի ևս 2 վերահանձնման հնարավորություն տվյալ կիսամյակի համար սահմանված լուծարքային շրջանում՝ անվճար հիմունքներով: Իսկ եթե ուսանողը 2 վերահանձնումների արդյունքում ևս չի կարողանում համապատասխան առարկաների /առարկայի/ ստուգարքներից կամ քննություններից ստանալ դրական գնահատականներ և հավաքել անհրաժեշտ կրեդիտները, ապա համաձայն գործող կարգի պահանջների՝ նրան իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը, վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք:

2. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումն արդեն իրականացվում է վճարովի հիմունքներով՝ բուհի կողմից տվյալ մասնագիտության և կուրսի համար սահմանված 1 կրեդիտի արժեքին համապատասխան գումարի չափով:

3. 2012-2013 ուսումնական տարվա տարեվերջի (2-րդ կիսամյակի) ստուգարքների և քննությունների վերահանձնման համար ուսանողների կողմից վճարվել է 3497800 ՀՀ դրամ:

Հարգանքով՝
Ռեկտոր **Ա. Ավետիսյան**

Կատարող՝ Ս.Գ. Աղբալյան
Հեռ. 58-13-13

Հասցե՝ ՀՀ, 0009, Երևան, Տերյան փ. 105: Հեռ.՝ (374 10) 524-629: Ֆաքս՝ (374 10) 545-843
Адрес: РА, 0009, Ереван, ул. Теряна 105: Тел: (374 10) 524-629. Факс:(374 10) 545-843
Address 105 Terian str., Yerevan, 0009, RA. Tel: (374 10) 524-629. Fax: (374 10) 545-843

www.seua.am